ունեցե՞լ է հնարավորություն հայցադիմումի պատասխան և պահանջվող ապացույցները ներկայացնելու համար՝ այն կտրվածքով, որ քաղաքացիական գործի քննությունը հնարավոր լինի իրականացնել օրենքով սահմանված ժամկետում:

Ամփոփելոց վերոգրյալը՝ Դատարանն արձանագրում է, որ քննարկվող դեպքում, Դատարանի վկայակոչված որոշումն ուղարկվել է փոստային ծառայության միջոցով, ինչը ստանալուց հետո օրենքով նախատեսված ժամկետում ներկայացվել է հայցադիմումի պատասխանը և պահանջվող ապացույցները:

Վերոգրյալի լույսի ներքո՝ Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է մերժման:

Միաժամանակ, Դատարանն անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, իսկ հայցադիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Տ

<<ԽԱՉ-ԱՐՄ>> ՍՊԸ-ի և <<ԷԼԼ-ԳԱ-ՄԱՆ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ հայցվորներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի 26.10.2023թ. թիվ 3502-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**